ՄԱՐՏԻ 3-Ը՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՕՐ, ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ. ՍԻՐԵԼԻ ԿԱՆԱՅՔ, ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ

ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ԱՅԺԱՐՈՅՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 17 - 18 (16616) ՇԱԲԱԹ, 3 ՄԱՐՏԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ Է'Լ ԱՎԵԼԻ ԿԱՅՈՒՆ ՈՒ ՀՈՒՍԱԼԻ Է ԴԱՐՁԵԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Մարտի 2-ին, մեկօրյա պաշտոնական այցով, Երեւանում էր գտնվում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Վրաստանի կառավարության ղեկավարի գլխավորած պաշտոնական պատվիրակության կազմում էին Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին, փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, Վրաստանի խորհրդարանի փոխնախագահ, Հայաստանի խորհրդարանի հետ բարեկամության խմբի ղեկավար Գիորգի Վոլսկին, արտաքին հարաբերությունների հարցով վարչապետի խորհրդական Թեդո Ջափարիձեն, զբոսաշրջության Ազգային վարչության ղեկավար Գիորգի Չոգովաձեն:

Երեւանի օդանավակայանում Վրաստանի վարչապետին եւ պատվիրակության անդամներին դիմավորեցին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, Հայաստանի կառավարության անդամներ:

Դիմավորման հանդիսավոր արարողությունից հետո, մեքենաների շարասյունը Զվարթնոց օդանավակայանից ուղեւորվեց Հայաստանի կառավարության շենք, որտեղ անցկացվեց երկու երկրների վարչապետերի առանձնազրույցը: Առանձնազրույցին հաջորդեց պավիրակությունների հանդիպումը՝ ընդլայնված կազմով: Բանակցությունների ավարտին, երկու երկրների վարչապետերը հանդես եկան հանդիպման արդյունքներն ամփոփող հայտարարություններով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Մարտի 2-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Հայաստանի նախագահի նստավայրում հանդիպում ունեցավ Սերժ Սարգսյանի հետ:

Հայաստանի նախագահը եւ Վրաստանի վարչապետն առանձնազրույցի ժամանակ քննարկեցին հայ-վրացական երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Հայաստանի նախագահը գոհունակությամբ փաստեց, որ բարձր մակարդակով տեղի ունեցող հայ-վրացական հանդիպումները՝ միտված երկկողմ բարեկամության ամրապնդմանն ու առկա ընթացիկ խնդիրների լուծմանը, մշտապես անցնում են փոխվստահության մթնոլորտում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նույնպիսի գոհունակությամբ արձանագրեց, որ 2017 թվականը նշանավորվել է վրաց-հայկական փոխադարձ բարձր մակարդակի այցերով, որոնք Գիորգի Կվիրիկաշվիլու համոզմամբ, վկայում են կայուն զարգացման դինամիկա ունեցող վրաց-հայկական հարաբերությունների մասին:

Առանձնազրույցից հետո, նախագահի նստավայրում բանակցությունները շարունակվել են աշխատանքային ճաշի ձեւաչափով՝ Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության անդամների մասնակցությամբ:

Հայաստանի նախագահը եւ Վրաստանի վարչապետն առանձնազրույցի ժամանակ քննարկեցին հայ-վրացական երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Հայաստանի նախագահը գոհունակությամբ փաստեց, որ բարձր մակարդակով տեղի ունեցող հայ-վրացական հանդիպումները՝ միտված երկկողմ բարեկամության ամրապնդմանն ու առկա ընթացիկ խնդիրների լուծմանը, մշտապես անցնում են փոխվստահության մթնոլորտում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նույնպիսի գոհունակությամբ արձանագրեց, որ 2017 թվականը նշանավորվել է վրաց-հայկական փոխադարձ բարձր մակարդակի այցերով, որոնք Գիորգի Կվիրիկաշվիլու համոզմամբ, վկայում են կայուն զարգացման դինամիկա ունեցող վրաց-հայկական հարաբերությունների մասին:

Առանձնազրույցից հետո, նախագահի նստավայրում բանակցությունները շարունակվել են աշխատանքային ճաշի ձեւաչափով՝ Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության անդամների մասնակցությամբ:

ԸՆԴԳԾՎԵԾ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 2-ին Հայաստանի կառավարությունում տեղի ունեցած երկու երկրների վարչապետերի առանձնազրույցին կողմերը գոհունակություն հայտնեցին Վրաստանի ու Հայաստանի միջեւ բարեկամական համագործակցության մակարդակից եւ կարեւորեցին առեւտրատնտեսական կապերի զարգացումը: Առանձնազրույցին հաջորդեց երկու երկրների կառավարական պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը:

Ողջունելով Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակությանը՝ Կարեն Կարապետյանը նշեց.

- Շատ ուրախ եմ եւ սիրով ողջունում եմ Ձեզ եւ Ձեր պատվիրակությանը Հայաստանում: Մենք իմ ընկերոջ հետ առանձնազրույց ենք ունեցել, որի ժամանակ արձանագրել ենք, որ մեր երկկողմ հարաբերությունները գտնվում են շատ բարձր մակարդակի վրա, եւ պետք է փաստենք, որ վերջին տարիներին այդ հարաբերություններում առաջընթաց ունենք: Մեր երկու ժողովուրդների ավանդական բարեկամությունը եւ քաղաքական հարաբերությունների այս բարձր մակարդակը չափազանց ամուր հենք են հետագա զարգացման համար: Շատ ուրախալի են վերջին շրջանի բարձրաստիճան հանդիպումները եւ մեր գործընկերների միջեւ հորիզոնական

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՕՐ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ՅՈՒՆԿԵՐՆԵՐԻՆ

Փետրվարի 25-ին, խորհրդային օկուպացիայի օրվա կապակցությամբ, Վրաստանում հարգանքի տուրք մատուցվեց 1921 թվականի փետրվարի 25-ին Թբիլիսիի մոտակայքում գտնվող Տաբախմելա-Կոջորիի ռազմաճակատում՝ խորհրդային զորքերի դեմ պայքարում զոհված ռազմական ուսումնարանի վրացի երիտասարդ ունկնդիրների՝ յունկերների հիշատակին:

Վրաստանի անկախության համար զոհվածների հիշատակին Տաբախմելայի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, փախստականների եւ բռնագաղթվածների հարցերով նախարար Սոզար Սուբարին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, պաշտոնական այլ անձինք:

Իր խոսքում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ յունկերների պայքարը անհետք չի մնացել, եւ, տեղի ունեցածից գրեթե հարյուր տարի անց, ազատ ու անկախ Վրաստանը հարգանքով է հիշում նրանց ներդրած ավանդը:

- Ամեն տարի մենք գալիս ենք այստեղ, որպեսզի հարգանքի տուրք մատուցենք Վրաստանի անկախության համար զոհված հերոսներին, եւ նշում, որ դրանք այն մարդիկ էին, ում համար կյանքն առանց ազատության իմաստ չուներ, կյանքն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Փետրվարի 28-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում անցկացվեց միջոցառում՝ նվիրված երեք տասնամյակ առաջ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում հայ ազգաբնակչության դեմ կատարված ոճրագործության զոհերի հիշատակին:

Վրաստանում Հայաստանի դեսպանության եւ Վիրահայոց թեմի նախաձեռնությամբ կազմակերպված հիշատակի միջոցառմանը, սումգայիթյան զոհերի հիշատակը հարգելու էին եկել Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Ռուսլան Պողոսյանը եւ Սամվել Մանուկյանը, Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի կրթության ու գիտության նախարարու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՕՐ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁՈՀՎԱԾ ՅՈՒՆԿԵՐՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առանց ազատության համար պայքարի եւս նշանակություն չունի,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, հարգանքի տուրք մատուցելով զոհված հերոսներին, հայտարարեց, որ այսօր Վրաստանն ազատ ու ժողովրդավարական երկիր է, թեպետ նրա տարածքի մի մասը կրկին բռնազավթված է:

- Սակայն, մենք երբեք չենք հաշտվի դրա հետ եւ խաղաղ բոլոր լծակները կօգտագործենք երկրի միավորման համար: Համոզված եմ, որ մենք կկարողանանք ապագա սերունդներին փոխանցել հզոր, միասնական երկիր,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նշենք, որ խորհրդային օկուպացիայի օրվա կապակցությամբ Վրաստանի նախագահականի եւ պետական կառույցների դրոշները փետրվարի 25-ին խոնարհված էին: Ըստ Վրաստանի խորհրդարանի 2010 թվականի մարտի 21-ի որոշման, փետրվարի 25-ը հայտարարված է երկրում խորհրդային օկուպացիայի օր:

1921-ի փետրվարի 25-ին ռուսական կարմիր բանակը գրավել է Թբիլիսին եւ տապալել իշխանությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՎՐԱՑԵՐԵՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 26-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Բոլնիսիում հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների համար գործող «Սովորում ենք վրացերեն» նախագահական ծրագրի մասնակիցների հետ:

Հիշեցնենք, որ «Սովորում ենք վրացերեն» ծրագիրը, Վրաստանի նախագահի պահուստային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, իրականացվում է 2015 թվականից, Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի հետ համագործակցությամբ:

Ինչպես նշեց Բոլնիսիում տեղի ունեցած հանդիպման նախաձեռնող, ազգային փոքրամասնությունների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին, ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում՝ Քվեմո Քարթլիում, Կախեթիում եւ Սամցխե-Ջավախեթիում, համալսարանի պրոֆեսորներն ու դասախոսները, մագիստրոսներն ու դոկտորանտները ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին ուսուցանում են պետական լեզուն եւ ինտեգրման ուսուցման մեթոդով սահմանադրության դրույթները: Ծրագրի շնորհիվ, պետական լեզվի ուսուցմանը զուգընթաց, մատչելի է դարձել նաեւ հստակ ու դյուրին ձեւակերպված տեղեկատվությունը այն իրավունքների եւ պարտականությունների մասին, որոնք շնորհված են վրացական օրենսդրությամբ:

Ինչպես նշեց Սոփիո Շամանիդին, արագացված մեթոդով այդ երկու բաղադրիչների ուսուցման արդյունքում, զգալիորեն բարելավվել է ազգային փոքրամասնությունների ինտեգրումը վրաց հասարակության մեջ:

«Սովորում ենք վրացերեն» նախագահական ծրագրի շրջանակներում, 2015-2017 թվականներին Վրաստանի վերոնշյալ երեք ռեգիոնների 11 մունիցիպալիտետներում դասընթացներ են անցկացվել 79 գյուղում: Անցած երեք տարիների ընթացքում դասընթացներին ներկա է եղել 6688 մարդ, որոնց 80 տոկոսը ստացել է հավաստագիր:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԻՎ, ՍՏԵՂԾՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 16 ՀԱԶԱՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ»

Փոթիում, «Աջարտեքստիլ» ընկերության նոր ձեռնարկության բացման արարողությանը, Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլու հավաստմամբ, «Արտադրի'ր Վրաստանում» նախագիծը պետական նախագծերից ամենահաջողակն է:

- Երբ մենք խոսում ենք, որ մեր կառավարության առաջնահերթությունն ազատ գործարարությունն է եւ տեղական արտադրության աջակցությունը, առանձնապես՝ տարածաշրջաններում, դա հաստատում ենք այն բարեփոխումներով, որոնք իրականացվում են երկրի վարչապետի եւ կառավարության նախաձեռնությամբ: Վստահորեն կարող եմ ասել, որ դրանց թվում առավել հաջողված նախագծերից մեկը «Արտադրի'ր Վրաստանում» նախագիծն է,- հայտարարեց Դմիտրի Քումսիշվիլին:

Նրա խոսքով, այդ նախագծի շրջանակներում, արդեն հաստատվել է 335 նախագիծ, որոնց ընդհանուր ներդրումային գումարը կազմում է ավելի քան 815 միլիոն լարի, իսկ կոմերցիոն բանկերի կողմից հատկացված վարկերը գերազանցել են 419 միլիոն լարիի նշագիծը:

- Վիճակագրության համաձայն, «Արտադրի'ր Վրաստանում» նախագծի շնորհիվ, երկրում արդեն ստեղծվել է 13 հազար նոր աշխատատեղ, եւ ուրախալի է, որ այսօր այդ թվին ավելացվում է եւս 3 հազար աշխատատեղ, որը այս նոր բացվող ձեռնարկության գլխավոր շարժիչ ուժն է, քանի որ այն ստեղծելու է որակյալ, մրցունակ արտադրանք,- հայտարարեց Դմիտրի Քումսիշվիլին:

Նշենք, որ «Աջարտեքստիլ» ՍՊՀ-ն նոր արտադրության շինարարության համար վերոնշյալ նախագծի շրջանակներում, խորհրդանիշային մեկ լարիով պետությունից ստացել էր հողատարածք, ինչպես նաեւ 3 միլիոն 200 հազարի վարկ ու 1 միլիոն 600 հազարի պետական համաֆինանսավորում:

ՏԱՐԵԼԻՑ

ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան փորձագետ Կարինե Մանուկյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, թբիլիսահայ մտավորականության ներկայացուցիչներ, հասարակայնության անդամներ:

Միջոցառումը սկսվեց զոհերի հոգու խաղաղության համար Հավլաբարի Սուրբ էջմիածին եկեղեցում կատարված հոգեհանգստյան պաշտոնով, որից հետո «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում անցկացվեց հիշատակի երեկո:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ոճրագործության զոհերի հիշատակը:

Մարդկության դեմ կատարված ամեն տեսակ ոճրագործություն դատապարտելու եւ սումգայիթյան ջարդերի զոհերի հիշատակը ոգեկոչելու խոսքով հանդես եկավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Միջոցառմանը ելույթ ունեցան Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, Թբիլիսիի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ծնունդով Բաքվից էռնեստ Առաքելովը, «Վրաստանի

հայ համայնք» հասարակական կազմակերպության մամլո խոսնակ Սանդրո Օհանյանը, ուրիշներ:

Ցուցադրվեցին հատվածներ՝ Սումգայիթյան ջարդերը ներկայացնող վավերագրական ֆիլմից:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՋԱՐԴԵՐԸ

Եվրախորհրդարանում տեղի ունեցավ Ղարաբաղյան շարժման 30-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարք, որին մասնակցեցին Եվրախորհրդարանի անդամներ, դիվանագետներ, Եվրոպական հասարակական կազմակերպությունների եւ հայ համայնքային կառույցների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ, լրագրողներ:

Միջոցառումների շրջանակներում, Եվրախորհրդարանի անդամները հանդես եկան Սումգայիթի հայկական ջարդերը դատապարտող հայտարարությամբ եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սումգայիթյան անմեղ զոհերի հիշատակը:

Ծավալվեցին քննարկումներ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման, Արցախի ինքնորոշման իրավական եւ քաղաքական հիմքերի, ԵՄ-ի դերի ու նշանակության մասին:



ԻՍՐԱՅԵԼ ԵՌՕՐՅԱ ԲՈՂՈՔԻՑ ՀԵՏՈ, ԲԱՑԵՑԻՆ ՏԻՐՈՋ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՏԱՃԱՐԸ

Երուսաղեմի՝ Քրիստոսի Հարության տաճարը (հայտնի է նաեւ որպես Տիրոջ Գերեզմանի տաճար) փետրվարի 28-ին բացվել է այն բանից հետո, երբ երեք օր փակ էր՝ ի նշան բողոքի եկեղեցական անշարժ գույքի որոշ տեսակների համար հարկերի եւ դրանց պարտքերի բռնագանձման՝ Երուսաղեմի քաղաքապետարանի գործողությունների դեմ:

Փետրվարի 27-ի երեկոյան վարչապետ Բենիամին Նաթանյահուի դիվանատունը հայտնել է, որ, մունիցիպալ հարկի գանձման շուրջ ստեղծված իրադրության կարգավորման ուղիների որոնման համար, կկազմվի հատուկ աշխատանքային խումբ: Խումբը բանակցություններ կվարի եկեղեցիների ներկայացուցիչների հետ, իսկ այդ ընթացքում, Երուսաղեմի իշխանությունները դադարեցնելու են հարկերի գանձման ընթացակարգերը, որոնք սկսվել են մի քանի շաբաթ առաջ:

Դրանից շատ չանցած, եկեղեցիների հովվապետերը՝ Երուսաղեմի Պատրիարք Թեոփիլոս Գ-ն, Հայ Առաքելական եկեղեցու Երուսաղեմի Պատրիարք Նուրհան Մանուկյանը եւ Սուրբ Հողի ֆրանչիսկյան կուստոդ Ֆրանչեսկո Պատոնը փետրվարի 27-ին տարածած համատեղ հայտարարության մեջ հայտնել են՝ փետրվարի 28-ի վաղ առավոտյան Տիրոջ Գերեզմանի տաճարը բացելու մասին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱԶՔԻ ՆՈՐ ԳԱԼԱՐ

Մարտի 1-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, հանդես գալով Դաշնային ժողովին հղված ուղերձով, ԱՄՆ-ին մեղադրեց սպառազինությունների մրցավազքի վերսկսման մեջ: Նրա խոսքով, սպառազինությունների մրցավազքի սկիզբը դարձավ ԱՄՆ-ի դուրս գալը Հակահրթիռային պաշտպանության մասին պայմանագրից: ՌԴ նախագահի հավաստմամբ, Ռուսաստանը ի վիճակի է ռազմավարական նոր սպառազինությամբ պաշտպանել իր եւ իր դաշնակիցների անվտանգությունը:

Խոսելով զենքի նոր համակարգերի փորձարկումների արդյունքների մասին՝ նա նշեց, որ, մասնավորապես, Ռուսաստանում սկսվել են «Սարմատ» նոր միջմայրցամաքային բալիստիկ հրթիռի ակտիվ փորձարկումները: Ելույթի ընթացքում, էկրաններին ցուցադրվել է այդ միջմայրցամաքային բալիստիկ հրթիռի արձակումը:

ՌԴ նախագահի խոսքով, «Սարմատը» հանդերձված կլինի լայն սպեկտրի մեծ հզորության, այդ թվում՝ գերձայնային միջուկային ռազմամթերքով եւ հակահրթիռային պաշտպանության հաղթահարման ամենաարդիական համակարգերով: Այն կարող է թիրախներ գրոհել ինչպես Հյուսիսային, այնպես էլ՝ Հարավային բեւեռի միջով:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Եվրախորհրդարանը մարտի 1-ին պաշտպանեց Լեհաստանի դեմ պատժիչ ընթացակարգ գործարկելու Եվրահանձնաժողովի որոշումը ազգային դատական բարեփոխման մեջ եվրոպական սկզբունքները խախտելու համար:

Այդ առաջարկության օգտին Եվրախորհրդարանի՝ Բրյուսելում ընթացող նստաշրջանում քվեարկել է պատգամավորների մեծամասնությունը: Նշված ընթացակարգը կարող է բերել նրան, որ Վարշավան Եվրախորհրդում ժամանակավորապես կզրկվի ձայնի իրավունքից, ինչն առաջին անգամ տեղի կունենա Եվրամիության պատմության մեջ:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԸ ԿՐԿԻՆ ՀՐԱԺԱՐՎԵՑ ՍՏՈՐԱԳՐԵԼ «ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, փետրվարի 21-ին Վրաստանի խորհրդարանը՝ 83 կողմ եւ 13 դեմ ձայներով, հաղթահարեց մինչ այդ օրենսդիր մարմնի կողմից ընդունած եւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլու կողմից վետո դրված հեռարձակման մասին օրենքը:

Ընթացակարգի համաձայն, խորհրդարանի կողմից երկրորդ անգամ հաստատված օրինանախագիծը ներկայացվեց երկրի նախագահին, որի ստորագրումից հետո օրեքը ուժի մեջ կմտներ: Թեպետ փետրվարի 28-ին Վրաստանի նախագահը հրաժարվեց ստորագրել օրինանախագիծը: Ինչպես հպայտարարեց նախագահի խորհրդարանական քարտուղար Աննա Նացվլիշվիլին, անցյալ տարվա վերջին խորհրդարանը փոփոխություններ է ընդունել «Հեռարձակման մասին» ու «Պետական գնումների մասին» օրենքներում եւ ընդունած փոփոխությունները հաստատման համար առաքվել էին երկրի նախագահին:

- Նախագահը հիմնավորված դիտողություններով խորհրդարանի քննարկմանը վերադարձրեց «Հեռարձակման մասին» օրինանախագիծը: Դրանից հետո, խորհրդարանը քննարկեց եւ չպաշտպանեց նախագահի հիմնավորված դիտողությունները: Կրկին ընդունված փոփոխությունները երկրորդ անգամ ներկայացվեցին նախագահի ստորագրմանը: Գիորգի Մարգվելաշվիլին հրաժարվեց ստորագրել «Հեռարձակման մասին» օրենքը,- հայտարարեց Աննա Նացվլիշվիլին եւ հավելեց, որ նախագահի դիտողությունները առնչվում էին կոմերցիոն գովազդմանը եւ պետական գնումներին:

Օրենսդրության համաձայն, ներկայումս օրինանախագիծը պետք է ստորագրի եւ հրապարակի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՈՆԿՐԵՏ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՌԵԺԻՄԻՆ

Փետրվարի 22-ին Ցխինվալիի տարածաշրջանում ռուսական օկուպացիոն ռեժիմի ներկայացուցիչների կողմից ծերբակալվել է Վրաստանի երեք քաղաքացի:

Ձերբակալվածներից մեկը՝ 34-ամյա Արչիլ Տատունաշվիլին, վախճանվել էր: Վրացական կողմը ներկայացրեց ձերբակալվածներին ազատ արձակելու եւ վախճանված Արչիլ Տատունաշվիլու դին հանձնելու մասին: Ռուսական օկուպացիոն ռեժիմի ներկայացուցիչները մինչ օրս տարբեր պատրվակներով ձգձգում են հանգուցյալի հանձնումը: Տեղի ունեցածի կապակցությամբ, Վրաստանի ԱԳ նախարարությունը տարածել է հայտարարություն, որտեղ մասնավորապես նշել է, որ Տատունաշվիլին «օկուպացիոն ռեժիմի հանցավոր գործողության զոհն է»: Վրաստանի ԱԳՆ-ն հարցի շուրջ անհրաժեշտ է համարում միջազգային կազմակերպությունների եւ Ժնեւի քննարկումների համանախագահների սկզբունքային արձագանքը՝ միեւնույն ժամանակ պատահածի անմիջական պատասխանատու համարելով Ռուսաստանին, որը տեղում վերահսկողություն է իրականացնում:

Նշենք, որ տեղի ունեցածի կապակցությամբ իրենց բողոքն են արտահայտել Եվրամիությունը, ԱՄՆ պետդեպարտամենտը, միջազգային մյուս կազմակերպությունները:

ՈՂԲԵՐԳՈՒԹՈՒՆ

14-ԱՄՅԱ ԴՊՐՈՑԱԿԱՆԸ՝ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ՁՈՒ

Փետրվարի 28-ի կեսօրին Թբիլիսիի կենտրոնում, Բարաթաշվիլու փողոցում, տեղակայված «Վրաստանի պետական էլեկտրահամակարգ» գերատեսչության շենքի երրորդ հարկից վայր ընկած ապակուց տուժեցին անչափահասներ:

Գերատեսչության կողմից տարածված հայտարարության մեջ նշված է, որ անչափահասներից մեկը՝ Ասլան Մամեդովը, վախճանվել է: Մյուս հինգ անչափահասները մարմնական տարբեր վնասվածքներով գտնվում են հիվանդանոցում: Նշենք, որ անչափահասները Թբիլիսիի թիվ 70 հանրային դպրոցի աշակերտներ էին եւ եկել էին այդտեղ իրենց ուսուցչուհու հետ:

Գերատեսչության հայտարարության մեջ ասված է, որ շենքի երեսապատումը իրականացվել է 2008թ., որից հետո վերանորոգման աշխատանքներ չեն տարվել: Ներկայումս Սամախարաուլու անվան փորձագիտական կենտրոնի մասնագետները պարզում են տեղի ունեցածը: Միջադեպի կապակցությամբ տարվում է քննություն:

Թբիլիսիի Բարաթաշվիլու փողոցում տեղի ունեցած ողբերգական պատահարի արդյունքում զոհված անչափահասի մահվան կապակցությամբ իրենց ցավակցությունն են հայտնել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՄԻՋԱԴԵՊ

ՏՀԱՆ ՄԻՋԱԴԵՊ ԲՈՐԺՈՄԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ

Բորժոմիի սակրեբուլոյի նիստի օրակարգում ներառված Բորժոմիի քաղաքապետարանի եւ հաստիքային աշխատակիցների աշխատավարձի հարցը դարձավ սուր դիմակայության պատճառ: Աշխատակիցների աշխատավարձի ավելացումը պաշտպանեց սակրեբուլոյի 17 պատգամավոր: Նրանցից 13-ը ներկայացնում էին «Վրացական երազանքը», իսկ 4-ը՝ «Հայրենասերների ալյանսը»:

Հիշեցնենք, որ սակրեբուլոյի՝ դրան նախորդած նիստում այդ հարցը չէր հաջողվել լուծել, քանի որ տեղի ունեցավ ֆիզիկական դիմակայություն «Վրացական երազանքի» ու ընդդիմությունը ներկայացնող պատգամավորների միջեւ:

Մեկնաբանելով տեղի ունեցածը՝ Բորժոմիից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Գեդեւան Փոփխաձեն հայտարարեց, որ Բորժոմիի սակրեբուլոյում ֆիզիկական դիմակայության փաստերն առաջին անգամ չէ, որ վավերացվել են: Մասնավորապես, պատգամավորը՝ որպես օրինակ, ներկայացրեց նախորդ գումարմանը սակրեբուլոյում տեղի ունեցած դիմակայությունը, այն ժամանակվա նախագահ Չաչանիձեի եւ պատգամավոր Գիուաշվիլու միջեւ:

- Հիմա նրանք միավորվել են եւ գործում են համատեղ: «Լեյբորիստները», «Հայրենասերների ալյանսը» եւ ազգային շարժումը համատեղվել են մի նպատակով՝ կաթվածահարել «Վրացական երազանքի» գործունեությունը: Ըստ իս, ստեղծված իրավիճակից միակ ելքը նոր ընտրությունների անցկացումն է,- հայտարարեց Գեդեւան Փոփխաձեն:



ՆԵՐՈՒՄ՝ 116 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել 116 բանտարկյալի: Այդ մասին հայտարարեց համաներման հարցերով պետական հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն: Նրա խոսքով, 116 բանտարկյալներից 73-ը անմիջականորեն ազատ կարձակվեն: Նրանցից չորսը կանայք են: Ինչ վերաբերում է մնացած 43 բանտարկյալին, որից երկուսը կին է, ապա նրանց պատժաժամկետը կրճատվում է:

Զվիադ Քորիձեի տեղեկատվությամբ, հանձնաժողովը քննարկել է 858 գործ:

ՇՈԹԱ ՌԻԺԱՄԱՁԵՆ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԴԱՏԱԽԱԶ

Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն, ներքին կադրային փոփոխությունների շրջանակներում Սամցխե-Ջավախեթիի նախկին երկրամասային դատախազ Մալխազ Կապանաձեին նշանակել է Թբիլիսիի դատախազ, իսկ տարածաշրջանում օրենքների հստակ կատարման վերահսկողությունը իրականացնող գլխավոր դեմքը դարձել է Վակե-Սաբուրթալոյի նախկին դատախազ Շոթա Ռիժամաձեն:

Սամցխե-Ջավախեթիիի նոր երկրամասային դատախազ, 34-ամյա Շոթա Ռիժամաձեն ավարտել է Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Մասնագիտությամբ աշխատանքը սկսել է 2007 թվականին՝ որպես Իսանի-Սամգորիի շրջանի դատախազության մասնագետ, եղել է Բաթումիի շրջանային դատախազ, Քվեմո Քարթլիի երկրամասային դատախազության քննչական բաժնի պետ, գլխավոր դատախազության դատավարական եւ քննչական բաժնի պետի տեղակալ:

ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՆ ՄԵՂԱՎՈՐ ՃԱՆԱՉՎԵՑ

Փետրվարի 28-ին անցկացված դատական նիստում, Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավան ճանաչվել է մեղավոր: Նշենք, որ անգամ Գիգի Ուգուլավան դատապարտվել էր այլ մեղադրանքներով, եւ, դատարանի որոշմամբ, Ուգուլավայի համար սահմանվել էր 1-ից 3 տարվա ազատազրկում, թեպետ դատարանի ներկայիս որոշումը ներառվեց նախորդ դատավճռի մեջ եւ, համապատասխանաբար, ներկայիս պատժաժամկետը համարվում է արդեն անցած:

Նշենք, որ Գիգի Ուգուլավան մեղադրվում էր Թբիլիսիի զարգացման հիմնադրամից 48 միլիոնի ապօրինի ծախսման մեջ: Քրեական օրենսգրքի այդ հոդվածը նախատեսում է ծառայական իրավասությունների շահարկում:

ՄԱՔՍԱՅԻՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս.թ. մարտի 1-ից արտասահմանյան պետհամարանիշերով Վրաստան մուտք գործող տրանսպորտային միջոցները պետք է պարտադիր ապահովագրվեն: ՀՀ պետհամարանիշերով տրանսպորտային միջոցների ապահովագրումը Հայաստանի տարածքում կատարվում է ՀՀ սահմանային անցակետերի մոտ տեղակայված «РОСГОССТРАХ»-ի գրասենյակներում, իսկ Վրաստանի տարածքում՝ սահմանակետի հարեւանությամբ տեղակայված «LIBERTY» բանկի գրասենյակներում:

Հերթերից խուսափելու նպատակով, նախքան սահման հասնելը, ՀՀ պետհամարանիշերով տրանսպորտային միջոցները կարելի է ապահովագրել նաեւ «РОСГОССТРАХ» ապահովագրական ընկերության այլ մասնաճյուղերում (բանակցություններ են տարվում, եւ շուտով ապահովագրական ընկերությունների ցանկը կընդլայնվի), ինչպես նաեւ՝ www.tpl.ge կայքի միջոցով:

Ապահովագրական փաթեթի արժեքը կախված է տրանսպորտային միջոցի տեսակից եւ ապահովագրման ժամկետից, բայց ոչ պակաս, քան՝ 15 օրով:

Ապահովագրական փաթեթի արժեքներն են.

❒ Մինչեւ 3500 կգ քաշ եւ ոչ ավելի քան 9 տեղ ունեցող տրանսպորտային միջոցներ - 15 օրվա համար՝ 30 լարի, 30 օրվա համար՝ 50 լարի, 90 օրվա համար՝ 90 լարի, մեկ տարվա համար՝ 295 լարի:

❒ 9 նստատեղ (վարորդի հետ) եւ ավելին ունեցող ավտոբուսներ - 15 օրվա համար՝ 45 լարի, 30 օրվա համար՝ 75 լարի, 90 օրվա համար՝ 140 լարի, մեկ տարվա համար՝ 480 լարի:

❒ 3500 կգ ավել քաշ ունեցող բեռնատարներ - 15 օրվա համար՝ 60 լարի, 30 օրվա համար՝ 100 լարի, 90 օրվա համար՝ 170 լարի, մեկ տարվա համար՝ 610 լարի:

❒ Բեռնատարների կցորդիչներ - 15 օրվա համար՝ 14 լարի, 30 օրվա համար՝ 25 լարի, 90 օրվա համար՝ 40 լարի, մեկ տարվա համար՝ 145 լարի:

Ապահովագրումը թույլ կտա ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում փոխհատուցել տուժածների կրած ֆիզիկական եւ նյութական վնասները: Ընդ որում, բժշկական օգնության ծախսերը կհատուցվեն մինչեւ 15 000 լարի, մահվան կամ հաշմանդամության դեպքում՝ մինչեւ 30 000: Մեկ դեպքի համար ապահովագրական փոխհատուցման սահմանափակումը կկազմի 300 000 լարի:

Գործում է թեժ գիծ: Հարցերի դեպքում դիմել +995-322-301-111 համարով:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ Է'Լ ԱՎԵԼԻ ԿԱՅՈՒՆ ՈՒ ՀՈՒՍԱԼԻ Է ԴԱՐՁԵԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարաբերությունները: Ես վստահ եմ, որ այսօրվա մեր հանդիպումը լինելու է շատ կոնստրուկտիվ եւ հեռանկարային: Շատ բան ունենք անելու, շատ ուրախ ենք ձեզ ողջունելու, բարով եք եկել Հայաստան:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ասաց.

- Շնորհակալություն, պարոն վարչապետ, կառավարության հարգելի անդամներ, ողջունում եմ բոլորիդ: Մեզ համար մեծ պատիվ է լինել երկրում, որը մեր բազմադարյա բարեկամն է: Մեր երկու հանրապետությունների համար էլ այս տարին հոբելյանական է եւ, համոզված եմ, որ մեր երկու երկրները՝ ինչպես Հայաստանը, այնպես էլ Վրաստանը, պատշաճ մակարդակով կնշեն իրենց առաջին հանրապետությունների հռչակման հոբելյանը: Ուրախ եմ, որ մեր երկու երկրների պատմական, ավանդական բարեկամությունը մեզ հնարավորություն է տալիս բարձր մակարդակի վրա պահել մեր քաղաքական հարաբերությունները, ինչպես նաեւ տնտեսական բնագավառում մեր հարաբերությունները: Ուրախ եմ, որ մեր տնտեսական հարաբերությունները եւս առաջընթաց ունեն. անցած տարվա ընթացքում արձանագրվել է երկկողմ ապրանքաշրջանառության 33 տոկոսանոց աճ: Եվ, ինչպես իմ գործընկերը նշեց, ներուժը մեծ է, կարող ենք այդ տնտեսական ներուժն օգտագործել եւ, կարծում եմ, այսօրվա մեր հանդիպումը կնպաստի դրան:

Անդրադառնալով երկկողմ տնտեսական գործակցության զարգացման հեռանկարներին՝ Կարեն Կարապետյանը նշեց, որ Հայաստանի տնտեսությունը զարգացման լավ թրենդի վրա է, ինչի մասին վկայում են 2017 թ. հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

Գիորգի Կվիրիկաշվիլին շնորհավորեց Կարեն Կարապետյանին 2017 թ. մակրոտնտեսական ցուցանիշների եւ տնտեսական աճի համար՝ նշելով, որ Վրաստանի համար կարեւոր է հարեւան եւ բարեկամ երկրի զարգացումն ու առաջընթացը: Նրա խոսքով, ապրանաքաշրջանառության ծավալներն ավելացնելու հնարավորությունները պետք է դիտարկել թե' երկկողմ, թե' բազմակողմ ձեւաչափերով համագործակցության խթանման համատեքստում, եւ Վրաստանը հետաքրքրված է վարչապետ Կարապետյանի նշած արտոնյալ ռեժիմների ուսումնասիրության ու առկա հնարավորությունների վերաբերյալ վրաց գործարարներին իրազեկելու հարցում: Վրաստանի վարչապետը ողջունել է նաեւ ԵՄ-ՀՀ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումն ու պատրաստակամություն հայտնել աջակցել դրա կիրարկմանը:

Երկու երկրների վարչապետերը քննարկեցին էներգետիկայի, զբոսաշրջության, պաշտպանության, տրանսպորտի, առողջապահության, հումանիտար ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Զրուցակիցները կարեւորել են երկկողմ ու բազմակողմ ձեւաչափով էներգետիկ գործակցության զարգացումը: Կարեն Կարապետյանը եւ Գիորգի Կվիրիկաշվիլին համակարծիք էին, որ մեծ ներուժ կա զբոսաշրջության ոլորտում, եւ պայմանավորվածություն ձեռք բերեցին ակտիվացնել շփումը այդ ոլորտը կարգավորող պետական մարմինների միջեւ: Կողմերը մտքեր են փոխանակել նաեւ առողջապահության, պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմների մշակման, կիբեր անվտանգության ոլորտներում փորձի փոխանակման վերաբերյալ:

Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերը կարեւորեցին տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեության ակտիվացումը եւ նշված հարցերի մանրամասն քննարկումը հաջորդ նիստի շրջանակում:

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԹԲԻԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Կարեն Կարապետյանը Վրաստանի իշխանություններին շնորհակալություն հայտնեց՝ Վրաստանում հայկական մշակութային ժառանգության, մասնավորապես, Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շենքի ամրացման ու վերակառուցման աշխատանքների համար: Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ Վրաստանը հպարտանում է ազգությամբ հայ հայրենակիցների հետ առկա բարեկամության եւ համագործակցության պատմությամբ, ովքեր դարերի ընթացքում հսկայական ներդրում են ունեցել Վրաստանի զարգացման գործում:

Վարչապետեր Կարապետյանը եւ Կվիրիկաշվիլին պայմանավորվել էին նաեւ ծրագրեր իրականացնել հումանիտար կապերի սերտացման, մասնավորապես, երիտասարդության շրջանում փոխճանաչելիության բարձրացման եւ բարեկամության ամրապնդման ուղղությամբ:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ԱՅՍՕՐ, ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ, ՄԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԵԼ Է ՇԱՏ ՋԵՐՄ ՈՒ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ»

Հայաստանի եւ Վրաստանի վարչապետերը բանակցություններից դուրս են եկել լավ տրամադրությամբ, որոնց ընթացքում ուրվագծվել են հետագա քայլերը: Այդ մասին Վրաստանի կառավարության ղեկավար Գիորգի Կվիրիկաշվիլու հետ հանդիպումից հետո լրագրողներին հայտարարեց Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը:

- Պետք է ֆիքսեմ, որ հայ-վրացական հարաբերությունները շարունակում են զարգանալ փոխվստահության մթնոլորտում: Ուզում եմ տեղեկացնել, որ այսօր, ինչպես միշտ, մեր հանդիպումն անցել է շատ ջերմ ու կառուցողական մթնոլորտում: Մենք քննարկել ենք ե'ւ մեր երկկողմ հարաբերությունները, ե'ւ տարածաշրջանային: Խոսել ենք մեր համագործակցության հնարավոր ուղղությունների մասին, դա Մեղրու ազատ տնտեսական գոտին է, պայմանավորվել ենք՝ ինչպես ենք շարժվելու առաջ էներգետիկայի եւ տրանսպորտի ոլորտներում, շատ մանրամասն խոսել ենք զբոսաշրջության, առողջապահության մասին,- ասաց Կարեն Կարապետյանը:

Նրա խոսքով, Վրաստանի վարչապետի հետ պայմանավորվել են քայլեր ձեռնարկել, որպեսզի երկու բարեկամ երկրների երիտասարդների միջեւ շփումներն ինտենսիվանան:

- Քննարկել ենք եւ մեր վերաբերմունքը դրսեւորել Վրաստանի իշխանություններին՝ պատմա-մշակութային ժառանգության պահպանման եւ վերականգնման հարցերի վերաբերյալ: Պետք է ֆիքսենք, որ բավականին լավ տրամադրությամբ ենք դուրս եկել ե'ւ տետ ա տետ, ե'ւ պատվիրակությունների հետ համատեղ բանակցություններից: Ռեալ ընդգծել ենք, ուրվագծել՝ ուր ենք շարժվելու, եւ վստահ ենք, որ, չնայած մեր երկրների հարաբերությունները շատ բարձր մակարդակ ունեն, մենք այս տարի ֆիքսել ենք տնտեսական հարաբերություններում բավականին մեծ աճ, բայց ներուժը շատ եւ շատ ավելի մեծ է,- նշեց Հայաստանի վարչապետը:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԵՆՔ ՆՈՐ ՏԻՊԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին վրաց-հայկական քաղաքական հարաբերությունները բարձր է գնահատում: Այդ մասին Վրաստանի վարչապետը նշեց Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի հետ բանակցություններն ամփոփելիս:

- Վրաստանին եւ Հայաստանին կապում են բազմադարյա բարեկամությունն ու բարիդրացիական հարաբերությունները, սա է այն հիմքը, որի վրա մենք կարողացել ենք նոր տիպի միջպետական հարաբերություններ հաստատել: Մենք ուրախ ենք, որ երկկողմ հարաբերությունները զարգանում են դրական դինամիկայով: Անցած տարի մենք նշեցինք դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյա հոբելյանը, հենց այս տարիների ընթացքում հնարավոր դարձավ վստահության վրա հիմնված փոխշահավետ գործընկերություն զարգացնել մեր երկու եղբայրական ժողովուրդների միջեւ,- ասաց Վրաստանի վարչապետը: Նա ընդգծեց, որ 2017 թվականին անցկացվել են երկկողմ բազմաթիվ բարձր մակարդակի հանդիպումներ:

- Նախորդ տարվա սկզբին Վրաստան է այցելել Հայաստանի վարչապետը, եւ մենք այսօր պատասխան այցով Հայաստանում ենք: Նաեւ անցած տարվա վերջին՝ դեկտեմբերին, պաշտոնական այցով Վրաստան ժամանեց Հայաստանի նախագահը, եւ ուրախ եմ, որ մեր երկու երկրների միջեւ քաղաքական հարաբերություններն իրապես բարձր մակարդակի վրա են: Այցի նշանակության եւ հարցերի բազմազանության մասին են խոսում մեր դիվանագիտական հարաբերությունները, եւ ուզում եմ նշել, որ մեր պատվիրակության կազմում են ինչպես նախարարներ, այնպես էլ՝ խորհրդարանական բարեկամական խմբի ներկայացուցիչը,- նշեց Վրաստանի վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին գոհունակություն հայտնեց այսօրվա բանակցությունների արդյունքներից եւ ընդգծեց, որ օրվա ընթացքում կշարունակեն բանակցությունները տարբեր ուղղություններով, կանցկացվեն շատ անհրաժեշտ հանդիպումներ:

- Շնորհակալություն իմ բարեկամին՝ ջերմ ընդունելության համար եւ հաջողություն եմ ցանկանում մեր բարեկամ, եղբայր պետությանը,- ասաց Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԼԱՎ ԲԱՐԵԿԱՄՆ Է»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ողջունում է Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումները եւ Հայաստանի նախագահի պաշտոնում Արմեն Սարգսյանի ընտրվելը:

- Ցանկանում եմ արձագանքել այն իշխանական բարեփոխումներին, որ իրականացվում են Հայաստանում, ցանկանում եմ ողջունել հաջող ընտրությունները, Արմեն Սարգսյանին, ով նույնպես Վրաստանի բարեկամն է: Արդեն խորհրդարանում այդ ընտրություններն անցկացվել են, եւ ցանկանում եմ մեր բարեկամ երկրին, որ հաջողությամբ ավարտի այն բարեփոխումը, որ սկսել է,- ասաց Վրաստանի վարչապետը՝ Կարեն Կարապետյանի հետ հանդիպման արդյունքներն ամփոփելիս:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)